№ 139 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28 **1896** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28 № 139

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՅ **1897** ԹԻԱԿԱՆԻ

25-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 25-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութեամբ: Մենք ստանում ենք սեփական հեռագիրներ:

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 բուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 բ., ինն և ութ ամսվանը՝ 8 բ., եօթ ամսվանը՝ 7 բ., վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ., մի ամսվանը՝ 1 բուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառին վճարվում է 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խեղճ հայոց թատրոն. Հեռագիրներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բագուից. Նամակ Մեծ-Ղարաբլիսայից. Նամակ Արմաւիրից. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. «Ֆալագ Վուրդունի».

ԽԵՂՃ ՀԱՅՈՑ ԹԱՏՐՕՆ

Երբէք և ոչ մի տարի Թիֆլիսի հայոց թատրոնը այնպիսի բարոյական և նիւթական քայքայման չէր հասել, ինչպէս այս տարի, ներկայ օրերում: Դերասանական խումբը պառակտված, բեմը շրջապատված ինտրիգներով. չը կայ հեղինակութիւն, որի առաջ խոնարհվէին խաղացողները. կատարեալ ամայութիւն թէ բէպերտուարի մէջ, և թէ դերասանների շրջանում. չէ երևում մի նոր, օրինաւոր պիես, հանդէս չէ գալիս մի նոր, փոքր ի շատէ շնորհով ոյժ,—այլ ամեն ինչ ենթակայ է անշարժութեան, մեռելութեան, և կամ բարոյական վերջնական քայքայման:

Տարիների ընթացքում, երբ բեմի վրա չէր երևում ոչ մի աչքի ընկնող ոյժ, և ոչ էլ մի որ և է նոր, հասարակութեան մըտքին և ճաշակին նիւթ տուող պիես, և երբ այդ տարրական պատճառով հայոց թատրոնը թեքվում էր դէպի անկում, թատրոնական տհաս գործոնները հայոց բեմի փրկութիւնը սկսեցին որոնել կողմնակի մեկենասների, կապիտալիստների դըրպանում, միամտաբար երևակայելով, թէ փողով կարելի է կենդանութիւն ներշնչել հասարակական մի հիմնարկութեան, որը չունի ապրելու համար կենսատու ոյժ ոչ խաղացողների և ոչ էլ բէպերտուարի մէջ: Մենք զգուշացնում էինք հայոց թատրոնի ինքնակոչ ներկայացուցիչներին, որ այդ ճանապարհը ուղիղ ճանապարհ չէ, որ փողով, կամ որ և է բարեմիտ—դրամատէրի նպաստներով չէ կարելի երկարացնել հայոց թատրոնի կեանքը, ինչպէս չէ կարելի գեղերով կեանք տալ այն հիւանդին, որը չունի թոքեր, չունի սիրտ, չունի արիւն...

Եւ ահա այսօր, երբ մեր թատրոնը զրկված է այնպիսի կենսատու ոյժերից, ինչպէս էր Ադամեան, և նրան շրջապատող փոքր ի շատէ խոշոր ոյժերը, երբ այլ ևս չը կան թէ մեծ և թէ փոքր մեկենասները, որոնք փորձեցին փողով մի քիչ էլ երկարացնել քայքայվող հիմնարկութեան գոյութիւնը, երբ նոյն իսկ մեր այժմեան փոքր ի շատէ տանելի ոյժերը հեռացել են Թիֆլիսի բեմից և կամ մեկուսացած են մնում, կամ պատում են դաւառներում,—այսօր, ասում ենք, հայոց բեմի փշրանքները այլ ևս ուրիշ միջոց չեն գտնում հասարակութիւնը դէպի թատրոն գրաւելու, բայց եթէ բեմ դուրս բերելով այնպիսի պիեսներ, որոնք գրական լեզուով մի անուն միայն ունեն, պամֆլետ, և որոնց կարելի է տեսնել որտեղ կամենաք, բայց ոչ թէ բեմի վրա, գեղարուեստի այդ պատկառելի հիմնարկութեան մէջ:

Այն օրից, երբ հայոց թատրոնը սկսեց դիմել մասնաւոր մարդկանց, որպէս զի մասնաւոր նպաստներով պահպանի իր աննախանձելի գոյութիւնը, այդ օրից նա դրեց իր անկման առաջին քարը: Իսկ այն օրից, երբ զզված, ոչինչ մտաւոր և գեղարուեստական զուարճութիւն չը գտնող հասարակութիւնը թատրոն քաշ տալու համար՝ մեր դերասանուհիները և դերասանները սկսեցին տնից տուն, խանութից խանութ տոմսակներ „սաղացնել“ սրա և նրա վրա, այն օրից մեր թատրոնի անկման երկրորդ քարը դրվեց: Այժմ էլ, երբ թատրոնից վերջնականապէս սառած հասարակութիւնը գրաւելու համար սկըսում են բեմ դուրս բերել այնպիսի պատկերներ և գրուածքներ, որոնք վերցրած են այս և այն անձի, կամ այս և այն մասնաւոր շրջանի կեանքից, դա արդէն հայոց թատրոնի վերջնական անկման ըսկիզբն է, որովհետև դրանից դէնը այլ ևս ոչինչ միջոց չէ մնում, և դա ամենածայրայեղ զէնքն է, որ գործ են դնում հայոց խեղճ թատրոնի անարժան սպասաւորները...

Մեր թատրոնի վրա այլ ևս չէ թագաւորում գեղարուեստի գաղափարը. նրա վրայից չքացել է Ադամեանների ոգին, և զրկված գաղափարից, գեղարուեստին ծառայելու շնորքից, հայոց բեմը դարձել է մի խումբ խաղացողների ապրուստի միջոց, որը թելադրում է բեմ դուրս բերել ամեն տեսակ անճաշակ, անբարոյականացնող, բալագաններին միայն յատուկ պամֆլետներ և վոդեվիլներ միայն նրա համար, որ ժողովուրդ գայ...

Խեղճ հայոց թատրոն:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Ռուսաց գործակալութեան)

Կ. Պոլիս, 26 նոյեմբերի: Բ. Դուռը հաղորդեց դեսպաններին արդէն իրագործված ռէֆորմների մասին Դիարբէքիրի, Բիթլիսի, Մամուրէթի և Աղիսի վիլայէթներում: Այդ հաղորդագրութիւնից երևում է, որ վերոյիշեալ վիլայէթներում զետեղված ժանդարմների մէկ երրորդ մասը քրիստոնեաներ կը լինեն, որ հարկահաները կառավարչական պաշտօնեաները կը լինեն, իսկ գիւղական պահապանների իրանք գիւղերը կը նշանակեն:

Վաշինգտոն, 26 նոյեմբերի: Հրովարտակը, որով այսօր նախագահը դիմեց կոնգրէսին, ըսկսվում է Հայաստանով, մի և նոյն ժամանակ մատնացոյց է անվում, թէ բոլոր միջոցները ձեռք էին առնված, որպէս զի կարելի լինի ամէրիկական կառավարութեան պահանջները իրագործել տալ Թիւրքիային: Կլիվլէնդ կարծում է, որ այժմեան ցաւալի պետական կարգերը Թիւրքիայում, որոնք այնքան մեծ հակասութիւն են կազմում լուսաւորված 19-դ դարի, երկար չեն կարող տանելի լինել. դա վիրաւորական է քրիստոնէական աշխարհի համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Նոյեմբերի 20-ին

Այս տարի այստեղ ևս բացվել է «Պետերբուրգի բժիշկների փոխադարձ օգնութեան ընդ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ՖԱԼԱԳ ՎՈՒՐԴՈՒՆԻ»

(Պատկեր) *

Գեղեցիկ է Բարթողեան լեռնաշղթան: Ալեզարդ Մասիսի փէշերից կախված են այդ լեռները, որպէս անհոգ, ծիծաղկոտ մանուկների մի անագին խումբ, որոնք բռնել են իրանց պառաւ ու հակայ մօր փէշերից, պատրաստվելով մի մանկական զուարճալի պար սարքել. բայց ծերունի մօր սառն անտարբերութիւնը, մռայլ և ահաւոր տեսքը կարծես բևեռել է նրանց իրանց տեղերում և խեղճերը կտրված, ընկճված նրա սառցային հայեացքի ճնշող ոյժի տակ, քարացել են, մնացել իրանց մի անդամ բռնած դիրքի մէջ, մէկը միւսի պուչից բռնած, մէկը միւսի ուսին կռթնած, թեներին բարձրացած, սպասելով դաժան մօր բարեհաճ, քաջալերող ժպիտին, որ մէկէն ի մէկ չարժվեն, ցատկեն և պար գան: Բայց անցնում են տարիներ և դարեր, նրանք մնում են մի և նոյն դիրքի մէջ, իսկ մայրը, ալեզարդ զլուխն ու ճակատը դէմ տուած երկնքի չանթ ու կայծակներին, շարունակում է պահպանել խորհրդաւոր լռութիւն: Ե՞րբ պէտք է ժպտայ...

Զմեռը, երբ Մասիսը իր մարմնի բիւրաւոր խոցերն ու ուռոյցքները ծածկում է ձիւնի ըսպիտակ սաւանով, Բարթողեան լեռների ալիքաւոր և գեղագրական բարձրութիւնները, հետեւելով իրանց զառամեալ մօրը, նոյնպէս ծածկվում են ձիւնի հաստ շերտով: Բարդ բարդ իրար վրա անկանոն ձևով դիզված ճերմակ ամպերի մի շարք են ներկայացնում նրանք, կամ յոգնած ուղտերի մի անագին կարաւան, որ երկար ճանապարհից յետոյ հանգիստ է առնում: Բազմաթիւ կիրճեր և արահետներ կան այդ շղթայի զանազան տեղերում, որոնցով տարվայ միւս ժամանակներում երթևեկում են մենաւոր ճանապարհորդները, բազմաթիւ աւազակներ և մաքսանենգ մարդիկ: Բայց ձիւնի հաստ ծածկոցը լցնում է այդ բոլոր կիրճերն ու չափիները և կազմում է մի դաւաճան, կորստաբեր հարթութիւն, որ ամեն րոպէ իր տակ կարող է քանալ ահաւոր անդունդներ, անսպասելի խոռոչներ, և կուլ տալ այն յանդուգն ճանապարհորդին, որ սիրտ է առել մին մենակ ձմեռ ժամանակ կարել անցնել այս լեռնաշղթան:

Սոսկալի է ձմեռը այդ լեռներում: Քանի՞ քանի թշուառներ են իրանց գլուխը մատաղ տուել նրա մթին խորխորատներում, քանիսին բուքն է խեղդել կամ ցրտաւար արել, քանիսն են խորասուզվել ձիւնապատ վիհերի մէջ և իրանց սառը գերեզմանը գտել ձիւնների կոյտերի տակ: Իսկ աւազակների գնդակներով տապալվածները: Ահա թէ ինչու տարվայ այդ ժամանակում ոչ ոք սիրտ չէ անում երևալ այդ դաժան վայրերում, ոչ ոք չէ կամենում կեանքը վտանգի ենթարկել, անցնել այդ շղթան: Ոչ մի կենդանի չունչ չէ խանգարում այդ զարհուրելի տեղերի սպանիչ խաղաղութիւնը, բացի սոված թափառական գայլերից, որոնք իրանց ոռնոցը խառնում են բքաբեր քամիների վզվզոցին:

Ահա Սինակայ սարերը. գագաթից մինչև փէշերը նրանք ծածկված են ձիւնի հաստ շերտով: Սինակայ սարեր... Բարթողեան լեռնաշղթայի մէջ ամառ ժամանակ գեղահրաչ դրախտ են ներկայացնում սրանք իրանց հարուստ բուսականութեամբ և հազարաւոր կախնահամ աղբիւրներով, որոնք կազմում են աքանչելի վտակներ ծաղկաւէտ հովիտներում: Իսկ այժմ... ձմեռնամուտի արեգակը մօտ է մայր մտնելու և նրա վերջին ճառագայթները երկչոտ, անվստահ կերպով զարկվելով ճերմակ ձիւնի սառուց կտրած մակերևոյթին՝ բեկրեկվում և ակնախտիղ փայլ են արձակում. խղճուկ, մեռելային փայլ, մեռնող ընութեան տխուր ժպիտն է սա... Երեկոյեան քամին խաղում է ձիւնների հետ և կամաց-կամաց ցուրտը սաստկանում է:

Այդ իսկ րոպէին լերան կատարին ձիւնի սպիտակութեան վրա յայտնվում են մի քանի շարժուն, սև ստուերներ: Սոված գայլերի մի վոհմակ է դա արդեօք, որ ցած է գալիս դէպի դաշտի գիւղերը, գիշերային յարձակումով կատաղի քաղցը յագեցնելու համար: Ստուերները, թէև խիստ դանդաղ, բայց ցածանում են անդադար: Ահա նրանք արդէն լերան կրծքին են և զարմանք. դրանք ոչ թէ գազաններ, այլ մարդիկ են, մի խղճալի, մի թշուառ ընտանիք: Ո՞վ կարող էր երևակայել անդամ, որ այսպիսի ժամանակ, այն էլ օրվայ այս պահուն, որ և է մարդ սիրտ կանի երևալ այդ լեռներում:

Առջևից գնում է մի նորատի կին, բռնած տաս տարեկան մանուկի ձեռքը, իսկ դրանց ետևից դանդաղ ու վախկոտ քայլերով իջնում է մի տղամարդ, հիւանդ, վիրաւոր: Բարբարոս թշնամու գնդակը ջախջախել է նրա աջ ուսը, և այդ պատճառով աջ ձեռքը կոխքից անշարժ կախված է մնացել, մինչդեռ ձախ ձեռքով անդադար աշխատում է փակել արեան հոսանքը: Բայց իզուր.. լերան կատարից մինչև վիրաւորը սպիտակ փայլուն ձիւնի վրա ձգվում է մի կարմրագոյն ժապաւէն, որ արեան կաթիլներից է կազմված: Վիրաւորի թշուառ կեանքի մնացորդն է սա, որ կաթիլ-կաթիլ քամվում է Սինակայ սարերի մէջ, բայց չը նայելով դրան, նա դերմարդկային ճիգեր գործ դնելով իր վրա, յուսահատ քայլում է:

Արեգակն արդէն մայր մտաւ. նրա վերջին ճառագայթներն էլ քաշվեցան լեռների ձիւնապատ գագաթներից: Վերջալոյսի փայլն էլ հետզհետէ պակասեց և, վերջապէս, երեկոյեան մռայլը, որպէս մի համատարած քող, եկաւ բարուրելու լեռներն ու ձորերը, ու մի դժոխային վիճակ ստեղծեց այս թշուառ ճանապարհորդների համար: Քամին սաստկացաւ. ցուրտն

* ,,Ֆալագ Վուրդունի“—բաղդի դառն հարուածին ենթարկված:

կերութեան» ճիւղը: Այդ ընկերութեան մասնակցում են բացառապէս բժիշկներ: Նորաբաց ճիւղը ունի արդէն 36 անդամ: «Բժիշկների փոխադարձ օգնութեան ընկերութիւնը» ունի մի չատ համակրելի նպատակ: Բացի նիւթական օժանդակութիւնից, որը պիտի վայելէ ամեն մի կարօտ անդամ, ընկերութիւնը հնարաւոր է դարձնում ապահովելու և իր անդամների պատիւը: Համաձայն կանոնադրութեան՝ ընկերութիւնը իր անդամներից ընտրում է երեքին «պատուի դատաւորներ» կոչումով: Պատուի դատաւորներին տրւում է իրաւունք կշռադատելու և վճիռներ կայացնելու թէ բժիշկների իրանց մէջ և թէ բժիշկների ու հասարակութեան մէջ ծագած վէճերի ու անբաւականութիւնների մասին: Ցաւալս տեղի թէ անտեղի լսւում են դժգոհութիւններ բժիշկների դէմ, թէ անտարբեր են, թէ գործը ձգձգում են չատ այցելութիւններ անելու նպատակով և այլն և այլն. նոյնը տեղի է ունենում և բժիշկների կողմից, որոնք դանդաւում են, թէ իրանց ըստ արժանւոյն չեն վարձատրում, պատուէրները չեն կատարում, հանելի այցեվճարները չեն վճարում և այլն: Ահա այդպիսի դէպքերում, որ չատ անգամ իրաւացի կամ անիրաւացի կերպով չօչափվում է բժշկի պատիւը և խօսակցութեան նիւթ դառնում, «պատուի դատաւորները» պիտի տեղն ու տեղը վերահասու լինեն, քննութեան առնեն եղելութիւնը և վճիռներ կայացնեն: Պէտք է նկատել, որ ներկայումս աւելի քան պահանջ կայ այստեղ «պատուի դատաւորների»: Տեղական բժիշկներից չատերը՝ նոյնպէս կուրացած չահասիրութեամբ, ոչ միայն խորութիւն չեն դնում մանագիտութիւնների մէջ, ոչ միայն «խիրուրգը» «ակուշօրութիւն», «ակուշօրը» աչքաբուժութիւն է անում, այլ և բարդված հիւանդութիւնների և մահվան տագնապի մէջ հեծող վշտահարներին նոյն իսկ առանց խիստ քննութեան ենթարկելու, առանց հիւանդութիւնը պարզելու, հասարակ «խինին» գրելով՝ հեռանում են թերես հանդիստ խղճով... Բայց այդ չէ բոլորը: Թերես այդպէս են վարվում չնորհիւ տգիտութեան: Այդ դեռ գուցէ այնքան մեղադրելի չէ.. Անպայման մեղադրելին, զզուելին այն է, որ առանց որ և է բարոյական ձգտումների, այդ «երդուեալ արհեստակիցները» աշխատում են միմեանց համար փոս փորել, հասարակութեան առաջ միմեանց վարկը գցել: Պատահում է այսպիսի դէպք: Հիւանդին, դիցուք, մի բժիշկ այցելում և դեղեր է նշանակում: Անցնում են օրեր, հիւանդի դրութիւնը փոփոխութիւն չէ կրում դէպի լաւը կամ աւելի վատանում է: Հիւանդի տէրը հարկադրված՝ հրաւիրում է ուրիշ բժիշկ: Վերջինը՝ պատիւ համարելով՝ որ իրան դերադասել են իր նախորդից, պահանջում է նախորդ կօղլէգի դեղատոմսերը: Իրաւացի թէ անիրաւացի կերպով Մեֆիստոֆէլի ժպիտ արձակելով նոյն իսկ հիւանդի և նրա մտերիմների ներկայութեամբ, դեղատոմսերը դէն է շպրտում.. «Պատուի դատաւորների» աչալրջութեամբ ով գիտէ գուցէ վերջ տրվի այդ անպատաւաբեր ու գարշելի արարքներին:

Ընկերութեան վերջին նիստին, որ կայացաւ նոյեմբերի 18-ին, ներկայ եղող քսան և երկու բժիշկների քուէարկութեամբ ընտրվեցան «պատուի դատաւորներ» պ. պ. Պեակեվիչ, Զալեան և Կրասնիկով: Ընկերութեան նիւթական միջոցները կազմում են անդամակցական վճարները, որոնցից 7-ական ռուբլի վճարում են հիմնադիրները, 2-ական ռուբլի անդամները: Սակայն ընկերութեան տեղական վարիչները աւելի յոյս ունեն «երեկոյթների», «ներկայացումների» վրա, որոնք այստեղ ընդհանրապէս աջող ելք են ունենում:

Ն. Դ.

ՆԱՄԱԿ ՄԵԾ ՂԱՐԱԲԻԼԻՍԱՅԻՑ

Նոյեմբերի 22-ին

«Մշակի» արդարացի նկատողութեանը՝ «Արարատի» բաժանորդագրենը ստիպմամբ առնելու մասին, կարեոր ենք համարում աւելացնել, որ գիւղեր կան, որոնք իրանց քահանային երկու ռուբլուց էլ պակաս արդիւնք են տալիս Ծննդեան տօներին: Մեզ հաստատապէս յայտնի է, որ Ղարաքիլիսային մօտ Սամուսախլի գիւղի քահանան հազիւ հազ 2 ռուբլի տնօրհնէք է ստանում իր ծխականներից, իսկ Բեղաւդալ և Վարդանլի գիւղերի քահանաները դրանից էլ պակաս: Պարզ է ուրեմն, որ այս յայտնի փաստի դէմ ամենախիստ ոստիկանական հրամաններն անդամ անիրագործելի կը մնան, եթէ քահանաների Ծննդեան տօների արդիւնքին չը միացնվէր Զատկի տնօրհնէքը նոյնպէս, «Արարատ» ամսագրի բաժանորդագրենը լրացնելու համար:

Ցաւելով պէտք է յայտնենք, որ գիտասիրտ սամարացու դեր կատարող գերմանուհի օրիորդը, որի մասին հաղորդեցինք մեր անցեալ թղթակցութեան մէջ՝ հիւանդ հայ գաղթականներին խնամելու ժամանակ՝ ինքն ևս հիւանդացաւ: Սակայն հիւանդութեան մէջ անդամ նա չէ մոռանում թշուառներին. գրեթէ ամեն օր նրանց համար գերազուր ղ ուղարկում:

Ղարաքիլիսեցի

ՆԱՄԱԿ ԱՐՄԱՒԻՐԻՑ

Նոյեմբերի 20-ին

Նոյեմբերի 17-ին Բարեգործական ընկերութեան Արմաւիրի տեղական ճիւղը՝ Արմաւիրի համայնական կառավարութեան չինութեան մէջ ընդհանուր ժողով ունեցաւ: Երկու հարիւրից աւելի անդամներից ներկայ էին 36 հոգի: Ընտրվեց ընդհանուր ժողովների նախագահ՝ պ. Զումալեան և քարտուղար՝ պ. Թառումեան: Վարչութեան երեք անդամների տեղ վերընտրվեցին Ալէք. Թորոսեան, Բաղդ. Կուսիկեան, իբրև նոր անդամ ընտրվեց Գալ. Շահնազարեան, իսկ փոխանդամ — Յար. Թորոսեան: Վերաստուգող յանձնաժողովի անդամներ մնացին անցեալ տարվայ անդամները: Քննվեց եկող 1897 թվի նախահաշիւը: Արմաւիրի հայոց դպրոցներին տրվելիք նպաստ անցեալ կիսամեակից մնացած 750 ռուբլին, ուսումնարանները փակ լինելու պատճառով, ժողովը միաձայն որոշեց յատկացնել ապագայում բացվելիք գրադարանին. չքաւոր աշակերտներին և ուսանողներին յատկացրած 300 ր. քիչ համարելով՝ դարձրին 500 ր., իսկ տառապեալներին տրվելիք 300 ր. նպաստը՝ 600 ռուբլի: Պէտք է ասել, որ ժողովի ժամանակ կարգ չէր պահվում. ամենքն էլ միաժամանակ խօսում էին: Նախագահի տեղ խօսում էր վարչութեան անդամներից մէկը: Ոմանք հարցի էութիւնը չը հասկացած՝ ոտքի էին կանգնում և ձայն տալիս: Լաւ չէր լինի արդեօք՝ ընդհանուր ժողովներում քուէտուփեր ունենալ և ընտրութիւնները քուէտուփերով կատարել:

Սիրողները մտադիր են տեղական ճիւղի օգտին մի ներկայացում տալու:

Արմաւիրն էլ արտաքուստ լուսաւորվում է. եղբայրներ Թորոսեանների առևտրական տունը և մեծ փողոցը լուսաւորվում է էլէքտրական լոյսով:

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Վաղարշապատ, նոյեմբերի 18-ին

«Մշակի» 133-րդ համարում կարդացի Վաղարշապատից մի լուր, որով թղթակիցը մեղադրում է ինձ, թէ հիւանդ գաղթականներին ես ոչ այցելում, ոչ էլ բժշկական օգնութիւն եմ հասցնում: Թէ որքան հեռու է այդ լուրը ճշմարտութիւնից՝ այդ ես ցոյց կը տամ միայն փաստերով իմ բժշկական գործունէութիւնից էջմիածնում:

Վերջին երեք ամսվան ընթացքում վանական դեղատանը ես ընդունել եմ աւելի քան 600 հիւանդ գաղթականներ: Բացի դրանից, յատկապէս իմ խնդիրքով, Վեհափառ Կաթուղիկոսը բարեհաճեց դրատայոլ, որ գրւոր դրատարդը վրա գտնվող՝ վանքին պատկանող տներից մէկը յատկացնվի հիւանդանոցի համար՝ գաղթականների մէջ եղած ծանր հիւանդներին այնտեղ բժշկելու նպատակով: Հիւանդանոցը բացվեց սեպտեմբերի 24-ին և գոյութիւն ունի մինչև այսօր, իմ հսկողութեան և խնամքի ներքոյ: Այդտեղ մինչև այսօր ես խնամել եմ տիֆով հիւանդ 22 գաղթականներ, որոնցից միայն երկուսը, որ ճանապարհից նոր եկած և հիւանդութեան վերջին աստիճանը հասած մտան հիւանդանոց, երկրորդ օրն իսկ վախճանվեցան, իսկ մնացածները առողջացել են և դուրս եկել հիւանդանոցից: Այժմ իմ խնամքի տակ այդ հիւանդանոցում կայ ընդամենը հինգ հիւանդ, որոնցից երկուսի հիւանդութիւնն է տիֆ (typhus abdominalis), մէկին տուբերկուլօզ թոքերի և աղիքների (tuberculosis pulmonum et intestinalis), մէկին փորահարինք (Dysenteria) և մէկի ոտները ցուրտն է տարել ճանապարհին լեռներում: Հիւանդանոցի բացման և նրա վիճակի մասին ես իր ժամանակին յայտնել եմ նաև նահանգական բժշկական վարչութեանը: Պարտք եմ համարում աւելացնել և այն, որ թէ գիւղում և թէ Մայր Աթոռի ագարակում (պլան) եղած հիւանդ գաղթականներին ես յօժարութեամբ այցելել և դեղեր եմ տուել վանքի դեղատանից ամեն անդամ, երբ հարկ է եղել: Մայր Աթոռի դեղատան մատեաններում ցուցակագրված հիւանդների անունները և դեղատոմսերը կարող են վկայել իմ ասածների ստուգութիւնը և թղթակցի հաղորդած լուրի միանգամայն ճշմարտութիւնից զուրկ լինելը:

Լիայոյս եմ, որ չէք զլանայ մի անկիւն չնորհելու «Մշակի» էջերում այս բացատրութեանս՝ հետևելով արդարութեան հին օրէնքին, թէ audiatur et altera pars:

Բժ. Կ. Տէր-Խաչատրեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Հեռագրով)

Ասխաբադ, նոյեմբերի 25-ին

Ի հերքումն ինքնակոչ, իբր թէ հասարակութեան ներկայացուցիչների հեռագիրների («Մշակ» № 136) խնդրում ենք տպագրել հետեւեալը. «Փանեանց քահանային ճանապարհ էր գցում ոչ թէ հասարակութիւնը, այլ մի որոշ կուսակցութիւն, որ կազմում է հասարակութեան երրորդ մասը:—Ազարեան, Բուդաղեան, Տէրտէրեան՝ այդ կուսակցութեան պարագլուխներն են: Ասխաբադում ընդամենը 155 ծուխ կայ, որոնց երեք քառորդ մասը ծխատէր քահանայ են ընդունում Ազբալեանցին:

Երէցփոխ՝ Տէր-Մկրտչեան: Եկեղեցական-դպրոցական գործերի հոգաբարձուներ՝ Մնացականեան, Շահբազեան, Մարգարեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Հեռագրով)

Ասխաբադ, նոյեմբերի 26-ին

Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեան, 185 ծուխերի ներկայացուցիչների հեռագրին պատասխանեց, թէ կարգադրութիւն կանվի պօտով: Այժմ գլխաւոր հարցն այն է, թէ եկող տներին կունենանք արդեօք քահանայ:»

Տէր-Մեսրոբեանց, Յովհաննէսեանց, Ղազեանց, Զերքէզեանց, Մուսայէլեանց, Բահաթուրեանց, Ղուլեանց, Յարութիւնեանց, Պետրոսեանց:

անտանելի է, իսկ խեղճերը մերկ են, չատ մերկ, քանի՞ անդամ թալանվեցան: Նրանց տները վաղուց են դադարել ցուրտ զգալուց. տներ չեն դրանք, այլ մի զոյգ փայտեր, որոնք թոյլ կերպով դիմադր տալով՝ քաշում են իրանց խղճուկ բեռները: Եւ այդպէս շարունակում են իջնել: Լուռ են, միայն ձիւնն է անդադար սարսռեցնող ճռճռոց հանում նրանց ուժասպառ ոտների տակ:

Եւ դեռ ինչքա՜ն են քաշել նրանք մինչև այստեղ հասնելը: Ահա թշուառ վիրաւոր տները յանկարծ թաղվեցին ձիւնապատ խոռոչի մէջ և նա երեսի վրա վայր ընկաւ՝ մի սոսկալի հառաչ արձակելով իր վերքի ցաւից: Ձիւնի մէջ թաղված, նա անզօր ձիգեր է գործ դնում ոտքի կանգնելու, թրպրտում է, որպէս վիրաւոր թռչուն, մինչև որ խեղճ կինը յետ է դառնում, բարձրացնում է նրան, և կրկին քայլում են...

Երկինքը հետզհետէ ծածկվում է թուխպերով. խաւարը տիրում է ամեն կողմ: Ահա կինը կանգ առաւ, մէկ վերև նայեց երկնքին, ուր ամպերի ճեղքերից երևում էին մի քանի աստղեր, նայեց իր չուրջը տիրող խաւարին, նայեց դէպի լերան ստորոտը և մի ծանր ախ քաշեց... Նա գիտէր լեռնում տեղ էր փնտռում: Անհնարին էր այդպէս հանել մարդկային բնակութեան: Բայց ո՞ւր գիշերել...

—Կարապետ, ինչ էնենք,—դարձաւ նա դէպի իր ամուսինը մի խղճալի, յուսահատ ձայնով,—մութն ընկաւ, կը վախնամ բուք էլ էղնի, էսա ճիժ չի գինայ քէլէլ, ես լէ չեմ գինա էսօր չկել, ծնկներս կը ծռուին:

Ամուսնու պատասխանն եղաւ մի վշտալից և երկար «ախ»: Իսկ քամին չարունակում էր սոսկանալ, ամպերը կուտակվում էին: Բոլոր նշաններից երևում էր, որ ընութիւնը մի արտասովոր բան է պատրաստում, մի այնպիսի բան, որը ամեն մի կենդանի արարած ընդդուտով նախազգում է, սարսափում և չտապում է թաղնվել ուր և լինի:

—Կարապետ, ապա ինչ կեղնի, կրկնեց կինը իր հարցը:

Անյոյս, սարսափելի վիճակը նրա աչքերի վաղուց ցամաքած աղբիւրակներից մի քանի կաթիլ արտասունք դուրս քամեց, որոնք կախվեցան արտանունքներից և իսկոյն սառցային փոքրիկ գնդակներ դառան: Խեղճ... Նա գիտէր որ իր վիրաւոր ամուսինը ուժասպառ է և անզօր, բայց դարձեալ կոչումն էր անում դէպի տաղմարդի խելքն ու կարողութիւնը:

—Իմալ կեղնի, կնիկ,—կոչեց նուազած ձայնով թշուառ ամուսինը,—աղաչենք Աստծուն, որ էս տեղ մեր խօքին առնի, մէ խեռ փրթինք... ես ինչ էնիմ, որ ջուրն ընկնիմ, ես լէ չիմ գինա քելել, չեմ տայ ինչ տի էնենք: Եաման Աստուած, մէկ ճար: Վերջին խօսքը նա ուղղեց դէպի երկինք:

Բայց երկինքն անողոք էր. նրա վրա մի ժըպտուն կտոր չէր մնացել: Անարկու ամպերը կամաց-կամաց ժողովվեցան և ծածկեցին ամբողջ երկնակամարը: Հսկայ Մասիսի թիկունքից լուսինը ամօթխած հարսի պէս ցոյց տուեց իր դէմքը, փորձեց իր պաղ կապտային ճառագայթներով լուսաւորել ձիւնապատ լեռների կատարները, բայց իզուր. նրա լոյսի պաղ ցնցուղները կորան անհետացան մթին ամպերի անհուն խաւարի մէջ և նա մի անթափանցիկ շղարշով չտապեց քողարկել իր փայլուն դէմքը: Իսկ քամին փչում է այնպիսի կատաղութեամբ, կասես ուզում է այս հսկայ լեռները փուլ բերել, և դեռնին հաւասարեցնել: Լուսինը մէկ էլ փորձեց իր ճառագայթները թափել ահաւոր վայրերի և թըշուառ ճանապարհորդների վրա. ահա նա յետ քաշեց իր երեսի քողը, մի տխուր մեռելային լոյս սփռեց անաբեկված ընութեան և մոլորված թշուառների վրա, կրկին թաղնվեց չարաճճի մանկան պէս, դարձեալ նայեց ամպերի պատառուածքից և ապա խսպառ ծածկվեց՝ համատարած խաւարի, փոթորկալից ամպերի, ցրտաշունչ հողմերի իշխանութեանը յանձնելով զարհուրած ընութիւնը և նրա հետ միասին այն դժբախտ արարածներին, որոնց ճակատագրին հաճելի է եղել այս ահաւոր ժամին մեն մինակ ձգել այս անծանօթ լեռների մէջ իրանց անհուն վշտի, անսահման թշուառութեան հետ: Սկսվեց Բարթողեան լեռների զարհուրելի բուքը: Երեք հոգիներն արդէն մի ձորակի մէջ են. այլ ես ոչ մի հնար չը կայ շարժվելու, նրանք հեշտութեամբ կարող են կորցնել իրար. ճանապարհը չը գիտեն: Երեքն էլ բռնում են միմեանց ձեռքից, փորձում են դարձեալ մի քանի քայլ ետդառնացից: Այժմ իմ խնամքի տակ այդ հիւանդանոցում կայ ընդամենը հինգ հիւանդ, որոնցից երկուսի հիւանդութիւնն է տիֆ (typhus abdominalis), մէկին տուբերկուլօզ թոքերի և աղիքների (tuberculosis pulmonum et intestinalis), մէկին փորահարինք (Dysenteria) և մէկի ոտները ցուրտն է տարել ճանապարհին լեռներում: Հիւանդանոցի բացման և նրա վիճակի մասին ես իր ժամանակին յայտնել եմ նաև նահանգական բժշկական վարչութեանը: Պարտք եմ համարում աւելացնել և այն, որ թէ գիւղում և թէ Մայր Աթոռի ագարակում (պլան) եղած հիւանդ գաղթականներին ես յօժարութեամբ այցելել և դեղեր եմ տուել վանքի դեղատանից ամեն անդամ, երբ հարկ է եղել: Մայր Աթոռի դեղատան մատեաններում ցուցակագրված հիւանդների անունները և դեղատոմսերը կարող են վկայել իմ ասածների ստուգութիւնը և թղթակցի հաղորդած լուրի միանգամայն ճշմարտութիւնից զուրկ լինելը:

Լիայոյս եմ, որ չէք զլանայ մի անկիւն չնորհելու «Մշակի» էջերում այս բացատրութեանս՝ հետևելով արդարութեան հին օրէնքին, թէ audiatur et altera pars:

Բժ. Կ. Տէր-Խաչատրեանց

անանելի, բայց երեխան քաշ է ընկնում:

—Մարէ, ոտներս փեռցան, եաման, չեմ գինայ քէլէլ, մարէ—մրմնջում է երեխան, կծկվելով մօր կողքին:

Կանգ են առել, վիրաւորը նոյնպէս անկարող է առաջ գնալ: Նա երերվում է, աչք է ածում ձորակի չուրջը, մինչդեռ կատաղի քամին չաչում է, ոռնում, ձիւնի հսկայական պատյաններ է կազմում երկնքում: Այսպիսի դէպքերում ճանապարհորդները սովորաբար տեղն ու տեղը նստում են, թաղվում են ձիւնի տակ՝ կամ ապրելու, կամ մեռնելու համար: Այդպէս վճռեցին անել և այս ճանապարհորդները, երբ յանկարծ նրանց աչքովն ընկաւ մի հսկայ ժայռ, որ ձիւների ընդհանուր մակերեսոյթից դուրս ցցված էր մնացել: Ցոյսի մի նշոյլ ծագեց խեղճերի սրտում. ով գիտէ, գուցէ հնարաւոր լինի նրա տակը մի խոռոչում կծկվել մինչև լոյս: Երեքն էլ միաժամանակ վերջին ճիգերն են հաւաքում, իրար քաշքշելով դիմում են դէպի այդ ժայռը: Ահա նրանք, վերջապէս, իրանց ցանկացած տեղումն են, զգուշութեամբ անցնում են ժայռի ետեը, քամու հակառակ կողմը, և անսպասելի կերպով կանգ են առնում մի այրի բացուածքի առաջ: Ո՞վ կը սպասէր. սա արդէն մի երկնային պարգև, մի փրկութիւն էր: Առանց մտածելու, առանց տատանվելու երեքն էլ մտնում են այդ այրը և ուժասպառ վայր են ընկնում հէնց այրի բացուածքի առաջ:

(Կը չարունակվի)

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Շամախի, նոյեմբերի 20-ին

Բաղումի բացվելիք թեմական դպրոցի առիթով մենք էլ հարկաւոր ենք համարում մատնանիշ անել մի քանի հիմնական հանգամանքների վրա:

Եթէ հարցը քմահաճութիւնների առարկայ չը դարձնենք՝ պիտի ընդունենք, որ թեմական հաստատութիւնների Շամախում հիմնելը առաջ է եկել ոչ այն հանգամանքից, որ մի ժամանակ Շամախին փայլելիս է եղել, իսկ այժմ Բաղուն է առևտրական և վարչական կենտրոնատեղի, այլ այն հանգամանքից, որ ամբողջ արևելեան Կովկասում դա միակ հայաշատ գաւառն է, որի բնակիչները կազմում են բազմաթիւ երկրագործ, նստակեաց գիւղացիներ: Անշուշտ այդ հանգամանքը ի նկատի առնելով իր ժամանակին, նպատակայարմար և արդիւնաւէտ է ճանաչվել առաջնորդանիստ քաղաք ընտրել Շամախին, այլ ոչ մի ուրիշ կենտրոն: Թեմական դպրոցը, Շամախում հիմնվելով միայն՝ կարող է իր բուն նպատակին ծառայել, որովհետև հնարաւոր կը դառնայ, որ Շամախու և թէ նրա ու Գէոգչայի գաւառների առանց մի հատիկ ուսումնարանի մնացած ժողովուրդը մերձենայ հիմնելիք դպրոցին: Դուցէ մեզ նկատեն, որ միակ Բաղուն տասնեակ գիւղերի չափ հայ ժողովուրդ ունի: Այո, բայց ովքեր են դրանք: Բաղուն արդիւնաբերական կենտրոն, է, այլ ոչ հաստատուն նստակեացների մի վայր. նրա բնակիչների մի նշանաւոր մասն էլ կազմում են ժամանակաւոր, ընտանիքից, հայրենիքից հեռացած, անտուն անտեղ և անընդհատ փոփոխվող առևտրականներ, բանուորներ և այլն: Այդպիսիներն են կազմում Բաղուի հայերի եթէ ոչ մեծամասնութիւնը, գոնէ ուղիղ կէսը: Բայի դրանից, չամախեցիների մեծամասնութիւնը Բաղուում ապրելով՝ կը վկայի, որ անմիջապէս շատ շատերը իրանց ընտանիքներին հայրենիք կը տեղափոխեն՝ Բաղուի զանազան աննպաստ հանգամանքների շնորհիւ, հէնց որ երկաթուղու դիծը կը ճիւղաւորվի դէպի Շամախի:

Սակաւ նշանակութիւն չը պիտի տալ մի ուսումնարանի հիմնարկութեան հարցում առողջապահական պայմաններին ևս, որոնցից ոչ միայն հիմնովին զուրկ է, այլ և շատերը նոյն իսկ Բաղուն անուանում են մանուկների սպանդանոց, մինչդեռ այդ կողմից Շամախին վաղուց ի վեր ճանաչված է բազմաթիւ ուսումնասիրողների կողմից որպէս Կովկասի ամենաառողջարար, նոյն իսկ ամարանոցներից մէկը *): Այդ մասին վկայել են պ.-պ. Ն. Ն. Սալացկի, Ս. Պ. Զելինսկի և բազմաթիւ բժիշկներ: Ճշմարտութիւն է նաև այն, որ Բաղուի բարոյապէս աղաղակված մթնոլորտը քայքայիչ հետևանքների է հասցնում երիտասարդների, նոյն իսկ պատանիների կեանքը: Այդ չեն ուրանայ նոյն իսկ իրանք բաղուեցիները:

Այդ ամենից յետոյ, հարկաւոր ենք համարում աւելացնել և այն, որ Բաղուի ժողովուրդը չը բաղադրված լինելով բազմաթիւ ուսումնարաններով, միջոց ունի նրանցից օգտվելու: Նա միջոց չը պիտի ունենայ իր որդոց տեղային մի շարք տարրական և միջնակարգ ուսումնարաններին յանձնելուց յետոյ, թեմական դպրոցի համար ևս պահելու մի պատկառելի թիւ: Եւ, վերջապէս, անցեալը պարզ կերպով մեզ ցոյց է տուել, թէ հայերի քանի տոկոսն էին կազմում Բաղուի հայոց նախկին ուսումնարանի աշակերտները: Մեր առածների ապացոյց կարող է ծառայել այն հանգամանքը, որ Բաղուի մէջ երկրորդ հայոց ուսումնարան (Շամախու թաղի) դաղարեց գոյութիւն ունենալուց: Պարզ է թէ ինչու:

Գալով նիւթականին, այն կասենք, որ միշտ կարիքն է միջոցներ ստեղծողը: Բացառութիւնները մի կողմ թողնելով, կարող ենք վստահ ասել, որ հայերիս մէջ գոյութիւն ունեցող ինչպէս զանազան բարեգործական հիմնարկութիւնները, նոյնպէս և ուսումնարանները պահպանվել են հետզհետէ ժողովրդից ստացված օժանդակութիւններով, որը միշտ նախանձախնդիր է եղել ամեն մի բարի՝ մանաւանդ ուսման գործում:

Ի դէպ, չը մոռանանք յիշել և այն, որ չնորհիւ Բաղուի անհրաժեշտ թանգ կեանքին, այնտեղ հազար ռուբլի ստացողն անգամ աղքատ է ապրում: Իսկ Շամախում, որպէս բնութեամբ հարուստ մի երկրում՝ ընդհակառակն է: Հետևապէս թեմական դպրոցի պահպանութիւնը Բաղուում կրկնակի ծախս կը պահանջի, քան թէ Շամախում, և որ գլխաւորն է՝ վերջինում միայն ապագայ դպրոցը, չնորհիւ տեղական հանգամանքների, կը ծառայի իր բուն նպատակին:

Սմբատ Սարգիսբէգեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երեքշաբթի, նոյեմբերի 26-ին, Թագաժառանգ Ցէսարեվիչ Մեծ Իշխան Գէորգիյ Ալէքսանդրովիչի անուանակոչութեան օրը, մաղթանքներ կատարվեցան բոլոր դաւանութիւնների եկեղեցիներում և աղօթատներում: Այդ օրը ս. Գէորգի զինուորական չքանշանի տօնն էլ էր: Ալէքսանդրեան այգում կայացաւ զօրահանդէս, որին ներկայ էր կովկասեան բանակի հրամանատար կոմս Տատիշչեվ:—Բաղաքը զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսավառված էր:

—

Հեռագիրը արդէն լուր բերեց, որ պատրիարք Օրմանեան նոյեմբերի 24-ին ներկայացաւ Թիւրքաց սուլթանին: Սակայն հեռագիրը ոչ մի խօսք չէ ասում, թէ ինչ ճառ արտասանեց հայոց նոր պատրիարքը Թիւրքաց վեհապետի առաջ, և ինչ դիրք է բռնել դէպի նրան Բ. Դուռը: Դրանից միայն կերևար, թէ ինչ ուղղութեան է ուզում հետևել Արթին-փաշայի ջանքերով ընտրված նոր պատրիարքը:

—

Մեզ հաղորդում են, որ հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը ուղարկեց Կարսի և Կաղզուանի ճիւղերին փող և տաք շորեր (200 զինուորական վերարկու) գաղթականներին բաժանելու համար:

—

Մեզ հաղորդում են Էջմիածնից, որ վեհափառ Կաթողիկոսի կարգադրութեամբ, հանգանակութիւն է բացված յօգուտ հանգուցեալ ուսուցիչ Վարդան Աբովեանցի անօգնական ընտանիքի: Տարաբաղդաբար, սա առաջին դէպքը չէ, որ մի մարդ, 20—30 տարի ծառայելով հայոց դպրոցներին՝ մեռնում է առանց որևէ միջոցների, թողնելով որդիքը կարօտութեան մէջ: Մենք կատարելապէս համակրում ենք մեր անմահ վիպագրող Խաչատուր Աբովեանի թոռներին օգնելու մտքին, բայց, մեր կարծիքով, Էջմիածինը անգործնական միջոցի է դիմել: Ներկայումս դժուար թէ մի այդպիսի հանգանակութիւն աջողութիւն ունենայ: Այդ պատճառով, գլխաւորապէս ինքը Էջմիածինը պէտք է հոգայ այդ մասին, այն տեսակէտից, որ Աբովեանցը մօտ 15 տարի ուսուցչի պաշտօն է վարել ճեմարանում: Էջմիածնի պարտքն է. 1) ձրի ուսում տալ հանգուցեալի երեխաներին ճեմարանի մէջ, և 2) սկսել Խաչատուր Աբովեանցի գրքերի հրատարակութիւնը Էջմիածնի տպարանում, այն նպատակով, որ դրա փողով ապահովվի Վարդան Աբովեանցի ընտանիքը:

—

Տեղական ռուս լրագիրները հաղորդում են, որ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Եանովսկի հարց է յարուցել, թէ արդեօք հայոց ծխական-եկեղեցական դպրոցների կրօնուսոյցները և երգեցողութեան ու գծագրութեան ուսուցիչները պէտք է ուսուցչական ցենզ ունենան, թէ ոչ:

—

Երէկ և անցեալ օրը ստացվեց Ռուսաստանի պօստը: Կովկասեան սարերում ճանապարհը դեռ բոլորովին բացված չէ:

—

Երեքշաբթի, նոյեմբերի 26-ին, Թիֆլիսի դատաստանական հիմնարկութիւնների շինութեան մէջ, դատաստանական քննիչ Մոսկալեվի գրասենեակում ինքնասպանութիւն գործեց մի ռուս պարոն՝ Ա. Օվսեաննիկով, որ կանչված էր քննիչի մօտ հարց ու փորձի և, ինչպէս ասում են, պիտի բանտարկվէր մի գործի պատճառով:—Այն ժամանակ, երբ քննիչը գրում էր, Օվսեաննիկով գրպանից հանեց մի փոքրիկ ռէվոլվեր և ծածկելով նրան իր թաշկինակով, դրեց ականջի մօտ և արձակեց: Մահը վայրկենական էր:

—

Երկուշաբթի, նոյեմբերի 25-ին, Թիֆլիսի արքունական թատրոնում ներկայացվեց «Ամիդա» օպերան: Երգչուհի Միւնինբերգ այս անգամ ևս ապացուցեց, որ նա չնորհալի դերասանուհի է, որ ոչ միայն լաւ երգում է, այլ և գեղեցիկ խաղում է: Փարաւոնի աղջիկ Ամներիսի դերում նա ցոյց տուեց և սիրող սիրտ և նախանձոտ ոգի և անձնուէր մի անհատ: Երգչուհի Պիցցագալի ունի մշակված ձայն և գիտէ մեծ աջողութեամբ օգտվել իր ձայնից զանազան զգացմունքներ արտայայտելու համար: Երգիչ Պերրէս ուժեղ ձայն ունի: «Ամիդայի» մէջ եթովպացի թագաւոր Ամոնասրայի դերում հանդէս եկաւ դերասան Մակակով, որ ունէր բնորոշ գրիմ, աջող խաղ և երգեցողութիւն: Թատրոնը լիքն էր, թէև «Ամիդան» կրկրված էր և եղանակը վատ էր:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են նոյեմբերի 24-ից. «Մի քանի օր առաջ Էջմիածնում, կարճատև հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց «Վէրք Հայաստանի» հեղինակ Խաչատուր Աբովեանի որդին՝ Վարդան Աբովեանը, թողնելով կնոջը և երեխաներին աղքատութեան մէջ:»

—

ՍՏԱՄԲՈՒԼԻՑ մեզ գրում են. «Կիրակի, նոյեմբերի 17-ին, Ստամբուլի հայ հասարակութիւնը առաջին անգամ լսեց մեր եկեղեցում Կարա-Մուրզայի քառաձայն պատարագի երգեցողութիւնը: Խումբը բաղկացած է 50 հոգուց, բայց կարող էր հասնել 75—80 հոգու, եթէ խոչնդոտ չը լինէր մեր նորընտիր երէցփոխը, որը, չը գիտենք, ինչ իրաւունքով, յայտնում էր ամենքին, թէ «աղջիկներին (այսինքն հասակաւոր օրիորդներին) արուլ չիմ տալ ժամը երգելու, չենէ աղոցը հետ թալաչմիշ կըլան»: Այդ հանգամանքը մի կողմից, օրիորդների և նրանց ծնողների անտարբերութիւնը միւս կողմից՝ արդեք եղան տալի լաւ խմբի կազմակերպութեան»:

—

ՆԵՐՔԻՆ ԱԽՏԱՅԻՑ մեզ գրում են նոյեմբերի 23-ից. «Անցեալ հոկտեմբերին տեղի ունեցաւ Ղազկաճորի գաւառի գրասենների ցուցակագրութիւնը: Այդպիսի մի ցուցակագրութիւն, որքան յիշում ենք, կատարվել էր ուղիղ սրանից 10 տարի առաջ: Ցուցակագրութիւնը այդ ամբողջ շրջանում, որ բաղկացած է 50 մեծ գիւղերից, բաժանված էր մի քանի մասերի, այն է 10—15 գիւղերի. բոլոր ձիերը հաւաքվելով մի կենտրոնական գիւղում այդտեղ ցուցակագրվում էին: Սակայն հազարաւոր ձիերի թուում մենք չը տեսանք գոնէ մի 10—20 լաւ, արագաթռիչ ձիեր՝ յատկապէս հեծնելու համար: Բոլորը գրեթէ բեռնելու, լծելու և այլ հաշմանդամ գրասներ, որոնցից շատերի կոզքերը, մէջքերը, ոտքերը վիրաւորված՝ արատաւոր գրասների մի ժողովածու էին ներկայացնում... Մի քանի տասնեակ ձիաներ, որոնք, ըստ երևոյթին, չաղ, ուժեղ և բանուկ գրասների տիպ էին ներկայացնում, պատկանում էին մալական հասարակութեան, սակայն դարձեալ փուրգոնները լծելու համար: Շատ-շատ՝ հայ գիւղերից մի քանիսը ցոյց հանեցին 2—3 հեծնելու լաւ ձիաներ: Իսկ այդքանը՝ համեմատած Ղազկաճորի տեղական հայ ընտանիքների թուին՝ մի կաթիլ ջուր է ծովի մէջ...»

—

ՂԶԼԱՐԻՑ մեզ գրում են. «Մեր սիրողների խումբը նոյեմբերի վերջին, յօգուտ քաղաքային այգու, տալու է մի ներկայացում: Խաղալու են «Արշակ Բ»: Այս երրորդ անգամն է, որ սիրողները խաղում են վերոյիշեալ այգու օգտին, որը իսկապէս կարօտ է դրամական օգնութեան»:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 21-ին, սրտի պայթիւնից, վախճանվեց Նահանգական դատարանի անդամ Ց. Սարուխանբէկեանը: Հանգուցեալը բնիկ չուչեցի էր: Նա վարում էր նաև հասարակական պաշտօններ. օրինակ թեմական դպրոցի հոգաբարձու էր:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Ֆրանսիայում հասարակական կարծիքը համակրական դիրք է բռնել դէպի Թիւրքիայի քրիստոնեաների վիճակը: Կառավարութիւնը Հանօտոյի բերանով յայտնեց, որ եթէ օսմանների պետը կամենում է իր ոյժի մէջ մնալ, պէտք է սկսի բարեփոխութիւններ երկրի մէջ: Ֆրանսիական դեսպան Կամբոն հեռագիր է ուղարկել իր արած առաջարկութիւնների հետևանքների մասին: Կաթոլիկները, իրանց ներկայացուցիչների՝ Շարմբոնի և Պարիզի արքեպիսկոպոսի միջոցով ցոյց տուին իրանց ջերմ համակրութիւնը: Բողոքականները վաղուց յայտնել են իրանց բարի տրամադրութիւնը: Արմատականների երկու նշանաւոր պատգամաւորներ՝ Կամիլ Պելլետան և Միլերան, պատրաստել են դասախօսութիւններ արևելեան քրիստոնեաների մասին. իսկ Կլեմանսօ դեռ մի քանի ամիս առաջ որոշ յայտնեց իր կարծիքը: Սոցիալիստ պատգամաւոր Ժորէս խօսեց մէկը այն նշանաւոր ճառերից, որ երբ և իցէ լսված են Ֆրանսիայի ազգային ժողովում: Մի խօսքով, Ֆրանսիական ազգի բոլոր խաւերի մէջ լսվում է բողոք այն անկարգութիւնների դէմ, որ խայտառակում են մեր դարի քաղաքակրթութիւնը: Եւ սակայն Ֆրանսիան ոչ միայն դեռ առանձին դրական քայլ չէ արել հայոց հարցում, այլ և ցոյց է տալիս դանդաղեցնելու, յետաձգելու հակումներ: Թիւրքիայի 200 միլիոն ֆունտ ստերլինգ պարտքից՝ 120 միլիոնը պատկանում է Ֆրանսիային: Ահա հէնց այդ հանգամանքը չատ մեծ նշանակութիւն ունի՝ Ֆրանսիայի պետական անձերի համար այս կամ այն վճիռ կայացնելու հայոց հարցում:

—

«Daily News» լրագրին հեռագրում են Հռոմից. «Բացի այն կոմիտէից, որ գործում է գեներալ Մենոտտի Գարիբալդիի նախագահութեամբ, կազմվեց մի նոր կենտրոնական կոմիտէ՝ հայոց զատի պաշտպանութեան համար, և գրաւում է շատ կուսակիցներ Իտալիայի զանազան մասերից: Կոմիտէը ժողովում է նպաստներ՝ կարօտ հայերին ուղարկելու:»

—

Թիւրքիան արգելել էր իտալական լրագիրների մուտքը այն պատճառով, որ իտալական մամուլը շատ կծու լեզու է բանեցնում Թիւրքիայի վերաբերութեամբ: Թիւրքիայում ապրող իտալացիները փորձեցին ստանալ լրագիրներ աստրիական պօստատան միջոցով. բայց այդ ևս արգելվեց: Իտալացիները շատ անբաւական են այդ հանգամանքից և դիմել են իրանց դեսպանի աջակցութեան: Իտալիան առհասարակ աւելի որոշ ձևով է արտայայտում իր հակակրութիւնը դէպի Թիւրքաց անկարգ վարչութիւնը, քան ուրիշ պետութիւնները:

—

Լօնդօնից գրում են «Новости» լրագրին հետևեալը. «Մեծ պետութիւնները, ցանկանալով հարկադրել սուլթանին չուտով մտցնել ծրագրված բէֆօրմները, խոստացել են նրան երաշխաւորել 5 միլիոն ֆունտ ստերլինգի փոխառութիւնը: Անշուշտ, պետութիւնները խոստովանում են, որ բէֆօրմների մտցնելը անկարելի է առանց փողի: Ամենից առաջ չէ՞ որ պէտք է վճարել ռոճիկ բոլոր այն պաշտօնեաներին, որոնց կը յանձնվի գործադրել բէֆօրմները, որովհետև, հակառակ դէպքում, այդ պաշտօնեաները, չը ստանալով ռոճիկ, հեշտութեամբ կարող են կաշառվել, ինչպէս եղել է մինչև այսօր: Նոր $2^3/_4$% փոխառութիւնը ապահովված է միջազգային երաշխաւորութեամբ: Յամենայն դէպս, պէտք է ասել, որ սուլթանի բանը այնու ամենայնիւ աջող է գնում, որովհետև ամենքը օգնում են նրան, ի նկատի ունենալով նրա դժուար կացութիւնը: Ասում են, սակայն, որ դրա համար սուլթանը կենթարկվի այն միջազգային յանձնաժողովի կօնտրոլին, որին լիազօրութիւն կը տրվի հսկել բէֆօրմների կանոնաւոր գործադրութեան և փոխառութեան միջոցով ստացած գումարների ծախքի վրա, սակայն, դեռ ոչինչ ճիշդ բան յայտնի չէ: Ըստ երևոյթին, պետութիւնները դեռ բոլորովին չեն լուծել այդ հարցը և առաջ քան սուլթանի վերաբերմամբ այդպիսի միջոցներ ձեռք առնելը, նրանք հետևեալ միջոցներն են առաջարկում. 1) խոստացված բէֆօրմները պէտք է կատարվեն. 2) հարկաւոր միջոցները դրա համար կը հայթայթվեն սուլթանին. 3) պետութիւնների պահանջը չը կատարելը կը հարկադրէ նրանց գործադրել այնպիսի միջոցներ, որ նրանք յարմար կը համարեն: Ասում են, որ այդ պայմանները սաստիկ տպաւորութիւն գործեցին սուլթանի վրա, մանաւանդ երրորդ կէտի սպառնալիքը: Ըստ երևոյթին, ցամաքային պետութիւնները հաւատում են ծրագր-

---

*) Очерки климата Закав. кр. (Запис. Кавказ. Имп. Геогр. Общ. кн. V за 1862 г.).

ված միջոցների իրագործման, բայց Անգլիան թերահաւատութեամբ և կասկածանքով է վերաբերվում նրանց և չէ կարծում, որ սուլթանը, նոյն իսկ անկեղծ ցանկութիւն ունենալով, կարողանայ մտցնել բէֆորմները։»

—

Կ. Պոլսից հաղորդում են, որ մարշալ Ֆուադ-Ղաղի փաշան սուլթանի հրամանով ենթարկվել է անային քանտարկութեան, մի օտար լրագրի թղթակցին տեղեկութիւններ հաղորդելու համար։

—

«Новости» լրագրին հեռագրում են Բերլինից, որ «Lloyd» ընկերութեան մի չոգենաւի նաւապետը, Աղեքսանդրիա գնալիս, յանձնեց Թիւրքաց ձեռքը հայ ճանապարհորդներին։ Նաւապետի այդ վարմունքի մասին քննութիւն է կատարվում։

—

«Nord» լրագրի մէջ տպված է. «Մենք աւելորդ ենք համարում հակաճառել մի քանի անգլիական, գերմանական և այլ լրագիրների հետ, կամ մատնացոյց անել արեւելեան հարցի լուծման ծրագիրներին վերաբերեալ նրանց հաղորդած սխալ տեղեկութիւնների վրա, իբր թէ այդ ծրագիրները ընդունվել են Պետերբուրգում ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան և ֆրանսիական դեսպան կոմս Մոնտեբելլոի փոխադարձ համաձայնութեամբ։ Որովհետև երկու կաբինէտների մէջ տեղի ունեցած մտքերի փոխանակութիւնը մնացել է դիպլոմատիական գաղտնիքի սահմանների մէջ, ուստի մենք բաւականանում ենք միայն յայտարարելով, թէ մի քանի լրագիրների կողմից Ռուսաստանին և Ֆրանսիային վերագրած ծրագիրները—բոլորովին երևակայական են։»

—

«Եւրոպան մտածում է, թէ Թիւրքիայում միայն քրիստոնեաներն են ենթակայ կամայականութեան, տանջանքի, ամեն տեսակ հարստահարութիւնների։ Ամենևին ոչ։ Մուսուլմանները, էլնց այն պատճառով, որ ոչ մի օտար պետութիւն չէ հետաքրքրվում նրանցով, աւելի չատ են հարստահարված, աւելի չատ են ճնշված, քան ոչ-մուսուլմանները։ Բոլոր դատաւորները հարստակներ բաժանվում են երկու դասի. նրանք, որոնք հարստահարում են սանձարձակ. նրանք, որոնք հարստահարված են առանց դիմութեան։ Առաջինները գտնվում են սուլթանի անսահման իշխանութեան տակ, որի ներկայացուցիչներն են համարում իրանց, ձգտում են դէպի ամեն մի ախտ, իսկ վերջինները իրանք են փչանում, չփվելով իրանց տերերի հետ և ստիպված լինելով ամեն բոպէ ենթարկվել զղուելի քմահաճոյքների, չը կարողանալով մինչև անգամ հասցնել իրանց գանգատը դատի պատասխանատուին և այդպիսով ընտելանալով բարոյական ստորութեան»։ («Sémaphore»)

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, նոյեմբերի 10-ին

Արդէն յայտնի է, որ վանի վերջին դէպքերից յետոյ հայերը սկսեցին գաղթել և ցրվել՝ Ռուսաստանի և Պարսկաստանի սահմանների վրա մի ապաստարան գտնելու յոյսով։ Այժմ այդ գաղթականներից Սալմաստում գտնվում են մօտաւորապէս 1,500 հոգի, որոնք թափառական կեանք են վարում, մերկ են և օրվայ հացի կարօտ։ Նրանք օգնութիւն են խնդրում Ատրպատականի հայերից։ Ներկայ կարևոր դէպքում, իբրև փրկարար հրեշտակ, օգնութեան ձեռք կարկառեց «Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան» վարչութիւնը։ Հանգանակելով մօտաւորապէս 300 թուման և մեկ տուն չը՝ջելով ընկերութիւնը հաւաքեց հին հագուստներ, գլխարկներ, կօշիկներ և նոր կտորներ, որոնցից 80 ձեռք կանացի հագուստներ կարել տուեց իր արհեստանոցի աշակերտուհիներին։ Այդ ամենը յանձնեց վարչութեան երկու անդամուհիներին՝ տ.տ. Սրբուհի Ամատունուն և Մարիամ Մասումեանցին, որոնք հոկտեմբերի 26-ին ճանապարհ ընկան դէպի Սալմաստ, ուր հանգանակած դրամով ցորեն պիտի գնեն և բաժանեն կարօտեալներին։ Շնորհակալութեան արժանի է տ. Ամատունին, որը յանձն առաւ ապրանքի տեղափոխութեան ծախսը ինքը հոգալ։ Ուրախալի է և այն, որ բողոքական ամերիկուհի տ. Վիլսոնն էլ իր չրջանի մէջ հաւաքել է 100 կըտոր հագուստ և ուղարկել նոյն գաղթականներին։

Թող մեր տղամարդիկ օրինակ առնեն տիկինների եռանդուն գործունէութիւնից և փութանակ անտեղի նկատողութիւններ անելու՝ գործեն համերաշխութեամբ յօգուտ հասարակական չարերի։

Միրզա

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՀԱՎՐ, 25 նոյեմբերի։ Ծովը հանգիստ է։ Նոյեմբերի 24-ին ծովն իջեցրին ռուսաց «Свѣтлана» կրէյսերը՝ ներկայութեամբ ռուսաց օֆիցերների, զինուորական և քաղաքացիական իշխանութիւնների։

ԼՕՆԴՕՆ, 25 նոյեմբերի։ Հնդկաստանի փոխարքան հաղորդում է, որ Հնդկաստանի չատ մասերում անձրևներ են գալիս։ Հացի գինը ընկնում է։ Շատ չրջանների համար սովի վտանգը անցաւ։

ՈՒՍԿԻԻԲ, 28 նոյեմբերի։ Հաղորդում են, որ Ուսկիւբի թեմի քաղաքներից և գիւղերից հեռագրով բազմաթիւ բողոքներ են ուղարկված տիեզերական պատրիարքին՝ Ամբրոսիոսին Ուսկիւբի միտրոպոլիտ ընտրելու դէմ։ Այդ բողոքներում, որոնց մէջ գտնվում է հոգևորականութեան բողոքը, 70-ից աւելի ստորագրութիւններով, Ամբրոսիոսի ընտրութիւնը անվաւեր է համարվում, որովհետև նախապէս թեմի կարծիքը հարցրված չէ եղել։ Ուսկիւբի թեմի 11,000 սերբական և միայն յունական 50 ծուխ կայ, և այդ պատճառով յունաց միտրոպոլիտ նշանակելը, որը ամենևին անծանօթ է սերբական լեզուին, անհնարին է համարվում, բացի դրանից, Ամբրոսիոս միտրոպոլիտի դէմ, ինչպէս ասում են, դատաստանական քննութիւն է սկսվելու, որովհետև նա մեղադրվում է մի անբարոյական գործի մէջ։

ԿԱՅԻՐԷ, 25 նոյեմբերի։ Եգիպտական կառավարութիւնը նոյեմբերի 24-ին վճարեց պարքի դրամարկղին կէս միլիոն ֆունտ, վերցնելով այդ դրամը պետական գումարներից, որոնք կը լրացնվեն փոխառութեամբ Անգլիայում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 նոյեմբերի։ Նոյեմբերի 15-ին, երեկոյեան 8 ժամին, Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Մարիա Աղեքսանդրովնա Յարսկօե-Սելօից ժամանեցին Պետերբուրգ։

ԽԱՐԿՕՎ, 26 նոյեմբերի։ Դատաստանական պալատի բաժանմունքը Կրեմէնչուգում քննեց Կրեմենչուգի առևտրական բանկում տեղի ունեցած գողութիւնների գործը։ Կառավարիչ Ֆոն-Գրուվկով և դիրեկտոր Իոզէնտալ աքսորի են դատապարտված 12 տարով, զրկելով բոլոր իրաւունքներից։

ՊԱՐԻԶ, 26 նոյեմբերի։ Պատգամաւորների ժողով։ Արմատական Մոչելէն հարցանդում է անում Մադագասկարի մասին։ Կառավարութեան բացատրութիւնից յետոյ, պատգամաւորների ժողովը, 431 ձայների մեծամասնութեամբ 93 ի դէմ, որոշեց անցնել հերթական խնդիրներին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ԵՐԿԱԹՈՒՂԻ

Բաթ. դուրս է գալիս	9 ժ. 40 ր. առ.	11 ժ. 20 ր. գիշ.
Թիֆլիս հասնում է	9 „ 55 „ եր.	12 „ 25 „ ցեր.
Թիֆլ. դուրս է գալիս	10 „ 50 „ „	1 „ 10 „ „
Բաղու հասնում է	4 „ 49 „ „	7 „ 30 „ առ.
Բաղուից դուրս է գալիս	2 ժ. 30 ր. ցեր.	11 ժ. 5 ր. գիշ.
Թիֆլիս հասնում է	8 „ 21 „ առ.	5 „ 50 „ եր.
Թիֆլ. դուրս է գալիս	9 „ 30 „ „	6 „ 50 „ „
Բաթում հասնում է	9 „ 45 „ եր.	8 „ 15 „ առ.

ԴԻԼԻԺԱՆՍՆԵՐ

Հենդ հոգու համար		
Թիֆլիսից դուրս է գալիս	7 ժ. առ.	9 ժամ. առ.
Գիշերում է	Մլեռում	Պասանաուր
Վաղբեկավաղ հասնում է	6 ժ. երեկ.	8 ժ. երեկ.
Վեց հոգու համար (չեն գիշերում)		
Թիֆլիսից դուրս է գալիս	9 ժ. 30 ր. առ.	7 ժ. երեկ.
Վաղբեկավաղ հասնում է	12 „ —ցերեկ	8 „ 50 ր. „

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ

որ երկար տարիներ վարժուհու պաշտօն է վարել հայոց դպրոցներում, ցանկանում է ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ ունենալ Թիֆլիսում կամ գաւառներում։ Ցանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Головинскій проспектъ, магазинъ Ясона Эліозова. (№ 139) 1—5

Արդէն պատրաստ է կօրօլէնկօի
„СЛѢПОЙ МУЗЫКАНТЪ“
Լտիւդի թարգմանութիւնը։
(№ 139) 1—2

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վենեբական հիւանդութիւնների։

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ՐՈՒԴԵՆԿՕ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խլի, թրեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Պատիւ ունեմ յայտնելու, որ մեր գրավաճառանոցում գտնվում են հետևեալ պատկերները։ 1) ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ պատկերը, շրջապատված վեց նշանաւոր կաթողիկոսներով, ծաղկապակներով. 2) ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ պատկերը վեց նշանաւոր գործիչներով. 3) ՄԱՏԹԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ պատկերը առանձին. մեծադիր արտանկարված Աբգուլայ եղբայրների լուսանկարից։

Երեք պատկերն էլ ճանապարհածախսով—1 ռուբլի՝ վճարը կանխիկ, կամ ուղարկել՝—15 հատ 7 կոպէկանոց մարկա։ Գումարով պահանջողներին 100 հատը 25 ր. ճանապարհածախսով։ Գումարով պահանջները պիտի ուղարկեն փողի ⅓ մասը պահանջի հետ։

Հասցէն. БАКУ, գրավաճառանոց «Բաֆֆի»—Ա. Աւագեան։ (№ 134) 5—5

ԱԶԴ

Թաւրիզի «Ընթերցասիրաց-գրադարանական ընկերութեան ՄԱՐԱՂԱՑԻ ճիւղի ընթերցարանը արդէն բացվել է և ընթերցանութիւնը կանոնաւոր կերպով չարունակվում է։ Սրանով խնդրվում է բոլոր հայ հեղինակներից, խմբագիրներից ու հրատարակիչներից, որ բարեհաճեն օգնել մեր աղքատիկ գրադարան-ընթերցարանին իրանց հրատարակութիւններով։ Յոյս ունենք, որ անուշադրութեան չի մատնվի այս յետ ընկած, մութ անկիւնը։ Գրադարան-ընթերցարանը առ այժմ ունի 150 կտոր ժողովրդական ու մանկական գրքեր և ստանում է միայն երկու պարբերական թերթեր, որոնցից մէկը «Մշակն» է։

Ի դիմաց ճիւղիս վարչութեան՝ նախագահ՝
Միրզա Մելիք-Սայեադեանց
(№ 135) 3—3

ԴՕԿՏՕՐ ԱՍՎԱԴՈՒՐՕՎ

մշտապէս գտնվելով ՍԱՆ-ՐԵՄՕՈՒՄ (Իտալիա), առաջարկում է իր ծառայութիւնը ներքին հիւանդութիւն ունեցողներին. ընդունում է նաև պանսիօներ։

Հասցէն՝ ITALIA. San-Remo, № 19, Corso Garibaldi. (№ 35) 3—12

Բժշկապետ
Ե. Ի. ՖՐԱՆՑԻՈՒՍ

Վելիամինովսկայա № 4, Դումայի հանդէպ։ Ընդունում է կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւն ունեցողներին 5—7 ժամ երեկոյեան։
(№ 127) 8—10

ԲԺԻՇԿ ԶԱՐԳԱՐԵԱՆՑ

Մօսկվայի Կայսերական համալսարանի մանկաբուժական կլինիկայի նախկին օրդինատոր, ընդունում է միայն հիւանդ երեխաներին ամեն օր, ժամի 11½—1-ը։ Շաբաթ օրերը՝ ձրի։

Հասցէն՝ Սարբո-Ինստիտուտսկայա, տ. № 13. № 103 (չր.) 26—40

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

փոխադրվել է նոր բնակարան՝ Միքայէլեան փողոց, բժիշկ Վերմիշեանի տուն, № 101. ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է երեկոյեան 6½—7½ ժամին։ (№ 137) 3—10

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ

վիճակային կօնսիստօրիայի ատենի մէջ նշանակած է ամուրդ ներկայ տարվայ դեկտեմբերի 11-ին, առանց կրկնաձրգի, կապալով տալու համար Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցու պատկանեալ գիւղերը՝ Ախալքալաքի գաւառում։

1—3 (№ 139) Անդամ կօնսիստօրիայի՝ Գաբրիէլ քահանայ Տէր-Գաբրիէլեանց

„ԱՐԱՔՍԻ“ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Բացված է «ԱՐԱՔՍԻ» 1897 թիւ բաժանորդագրութիւնը։ Հանգիսի երկու գրքերը, որ պարունակելու է աւելի քան 150 ճոխ նկար, գլխաւորապէս Յաճկահայաստանի բնութիւնից և տեղերից՝ ամենայն ճշդութեամբ կը հրատարակվեն ապրիլ և նոյեմբեր ամիսներին։

Բաժանորդագրիչը մնում է նոյնը—երկու գրքի համար 3 ռուբլի։ Արտասահման՝ 10 ֆրանկ կամ 2 դոլլար։ Մեր այս ձեռնարկութեան մասին աւելի մանրամասնօրէն գրուած է «Մշակի» № 135 ի մէջ։

1895 տարեշրջանի II գիրքը լոյս կը տեսնի վերջվարին։

Դիմելու է այս ապահով հասցէով.

ПЕТЕРБУРГЪ, Симеону Гуламирянцу կամ ST. PÉTERSBOURG, Siméon Goulamiriantz.
Սիմէօն Գուլամիրեանց
1—5 (№ 138)

ԹՖԼԻԲՈՒԼԻ ՔԱՐԱԾԽԱՅԻՆ ՀԱՆՔԵՐԻ ԵՒ ԲՐԻԿԷՏԻ

արդիւնաբերութեան ընկերութեան վարչութիւնը սրանով յայտարարում է ի գիտութիւն գնողների, որ յիշեալ ընկերութեան բրիկէտների վաճառումը լինում է իր տեղում, պուդը 13 կոպէկով։ Մանրամասն պայմանները կարելի է լմանալ հանքերի գրասենեակում։

Հասցէն հեռագիրների համար՝ «Тквибульскія копи, управленіе». Նամակների համար—Кутаисъ—Тквибули, Управленіе Тквибульскихъ копей и брикетнаго производства.
(№ 124) 15—15

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ
ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Տնային գործածութեան համար)

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԻՇՈՒՆԱ, այն է հատատ մահ մկներին, խլուրդներին և ուրիշ կրծողներին։ Այս միջոցը արտաքսում է այդ կենդանիներին գլխաւորապէս բնակարաններից, այնպէս որ նրանք չեն մնում գետնայարկի տակ և չեն տարածում գարշահոտութիւն։

ՄԼԱԿՆԵՐԻ ԴԷՄ ՀԵՂՈՒԿ, ոչնչացնում է նրանց ընդմիշտ։ Նա չատ հաճելի հոտ ունի և բիծ չէ թողնում ճերմակեղէնի, կօշիկների և կարասիքի վրա։ Փոշիացնելով նրան, սենեակի օդին հաճելի թարմութիւն են հաղորդում և միաժամանակ հալածում են ցեցը, ճանճը և մոծակները։

ՓՈՇԻ՝ ՄԻԶԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ամենայարմար միջոցն է բոլոր միջատները և նրանց սաղմերը բոլորովին ոչնչացնելու համար։ Այդ փոշին անփոխարինելի է լուեր և մլակներ ոչնչացնելու համար անկողիններում, ներքնակներում, թաղիքով պատած փայտային պատերում։ Ոչնչացնելով ցեցը և չունենալով նաֆթալինի անհաճոյ հոտը, այս փոշին բոլորովին փոխարինում է նրան. դրա համար հարկաւորութիւն չը կայ ամառը տալ մուշտակները և ուրիշ մորթեղէն իրերը պահելու համար։ Փոշու ազդեցութիւնը, երբ նրան գործադրում են ամեն տեսակ միջատների, մրջիւնների դէմ—գրեթէ վայրկենական է—հետևանքը զարմանալի։ Հարցնել դեղավաճառական խանութներում։
(№ 23) 24—50

Дозволено цензурою, Тифлисъ, 27 Ноября 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.